ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ XII ԴԱՐԻ ԵՐԿՈՒ ՀՈՒՇԱՐՁԱՆ-ԿՈԹՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գ. Հ. ԿՅԱՐԱԽԱՆՅԱՆ

Հայ ժողովրդի միջնադարյան մշակութային ժառանգության մեջ պատկառելի տեղ են գրավում խաչքար հուշարձանները։ Տուֆից, բազալտից, գրանիտից և այլ տեսակի քարերից կերտված, հաճախ բազմապիսի ճոխ զարդաքանդակներ ունեցող այդ հուշարձանները, ինչպես պարզված է, կերտվել են ամենատարբեր դրդապատճառներով՝ հասարակական, տնտեսական, քաղաքական, մշակութային, կրոնա-պաշտամունքային։ Խաչքարերը հանդիսացել են նաև ճարտարապետական կոթողները հարդարող տարր։

Բազմազան նպատակներով կանգնեցված խաչքարերի մեջ եզակի են այն նմուշները, որոնք իրենց վրա ունեն «հանգիստ» հիշատակություններ։ Այդօրինակ գերեզմանական հուշարձանի հետաքրքիր, առայժմ եզակի օրինակ է Աբովյանի շրջանի Առինջ գյուղի միջնադարյան գերեզմանատանը գտնվող, վարդագույն տուֆից կերտված խաչքարը, որի արձանագրությունը հաղորդում է XII դարում ապրած քանդակագործի անունը։ Պահպանվել է տեղահան արված և ջարդված խաչքարի միայն ստորին կեսը՝ խորանարդաձև պատվանդանի մեջ ագուցված պոչուկի հետ միասին։ Պահպանված մասի երկարությունը 76 սմ է, լայնությունը՝ 114, հաստությունը՝ 30։ Պատվանդանի մեջ հագցվող պոչուկն ունի 63 սմ լայնություն և 32 սմ բարձրություն։ Կոթողի կենտրոնում զետեղված խաչից ներքև, աջ և ձախ կողքերից իջնող շրջանակներում փորագրված են երկրաչափական դեղեցիկ զարդաքանդակներ (նկ. 1)։ Քանդակազարդ մակերեսի այն հատվածում, ուր սովորաբար լինում է կոթողի դարդարուն վահանը կամ գունդը, զետեղված է չորս տողից բաղկացած հետևյալ արձանագրությունը.

Ի ԹՎ։ ՈԼ. ԱՅՍՀԱՆԳԻՍՏ
Ս ԳՐԻԳՈՐՈՔԱՀԱՆԱՒԱՂ

ԱՂԵՄՔՅԻՇԵՍՋԻՔԻ ՏՐ
ՍԱՐԿԱՒԱԳԳՐԻՉ

որը կարդացվում է՝ Ի ԹՎ։ ՈԼ (1181 Թ.) ԱՅՍ ՀԱՆԳԻՍՏՍ ԳՐԻԳՈՐՈ ՔԱՀԱՆԱՒ, ԱՂԱՋԵՄՔ ՅԻՇԵՍՋԻՔ Ի ՏՐ, ՍԱՐԿԱՒԱԳ ԳՐԻՉ։

Արձանագրությունից պարզ է դառնում, որ խաչքարը կանգնեցվել է Գրիգոր քահանայի հիշատակին, իսկ կերտողն է Սարկավագ անունով քանդակագործը։ Հայտնի է, որ միջնադարյան հայ քանդակագործները իրենց ձեռակերտների վրա ստորագրել են գծող, կազմող, կազմիչ, հորինող, նկարող, նկարիչ, քանդակագործ, աշխատող կոչումներով։ Առինջի 1181 թ. խաչքարի վրա քանդակագործ Սարկավագը իրեն անվանել է գրիչ։ Նույն իմաստով «գրիչ» անվանումը հանդիպում է մի փոքր ավելի ուշ, XIII դարի երկու խաչքարերի վրա։

Ինչպես հայտնի է, զգալի թիվ կազմող միջնադարյան գերեզմանական հուշարձանները տապանաքարից բացի հարդարվում էին խաչքարով։ Նման դեպքում խաչքարի վրա հանգուցյալի և կոթողը կանգնեցնողի անվան հիշատակություններ բովանդակող արձանագրություններում սովորաբար փորագրվում էր «ի տապանի»։ Ասվածը հաստատող հուշարձաններից հիշատակենք Խաչենի Գանձասար վանքի հյուսիսային պատի տակ գտնվող, Առինջի հուշարձանի տարածքից խաչքարը, որը վերևում՝ 112, ներքևում՝ 107 սմ լայնություն ունի և շուրջ երկու մետր բարձրություն (նկ. 2)։ Կոթողը հետաքրքիր է նաև կենցաղային պատկերաբանդակներով։

Բավական ուռուցիկ զարդաքանդակներ ունեցող այս խաչքարի ճակատային մասի զարդապատկերները բաղկացած են երկու շարք փոքրիկ ուղղանկյունիներից, որոնցից յուրաքանչյուր չորսի մասերը միավորվելով կազմում են շրջանաձև հյուսվածքավոր զարդաքանդակ։ Շրջանաձև զարդերն առանց բառանկյունիների միմյանց հետ հաջորդական հյուսմամբ զբաղեցնում են խաչքարի երկու ուղղահայաց եզրերը։ Խաչքարի խորանն ուղղանկյունի է։ Վերին անկյունները թեքությամբ կտրված են ուռուցիկ զարդաքանդակների դրվագով։ Խաչքարի վերին թևի երկու կողմերում վերարտադրված են խաղողի քանդակներ, ստորին թևի մոտ՝ արմավենաձև ճյուղեր, որոնք ավարտվում են վարդյակ հիշեցնող դեղդաքանդակներով։ Խաչքարի վահանի տեղում գտնվում է նաև ուռավորված պատկեր, որի երկու կողմերում, ապատ տարածության մեջ, փորագրված են երեք տարբեր չափի խորանաձև շրջանակներ, որոնցով և լրացվում է հատկապես այդ նպատակով թողնված հատվածը։ Աջ կողմի երկու խորաններում ոլորիչ տառերով փորագրված է թվականը՝ ԹՒԻՆ ՌԼԱ (1181 թ.) էՒ, ընդ որում թվականը ներկայացնող տառերը շրջափակված են փորված կետերով։ Խաչքարի խորաններից առավել հետաքրքրականը ձախ



Նկ. 1

կողմինն է, որը ծավալով ամենամեծն է։ Այստեղ գծային եղանակով պատկերված են մարդկային կերպարներ՝ մայրն իր երեխայի հետ։ Յուրաքանչյուրի մոտ, աջից և ձախից տեղադրված են ծաղկաձև քանդակներ։



Նկ. 2

Տարածություններ, որտեղ տեղադրված են հիշյալ խորանները, խաչքարերի ավանդական հորինվածքում սովորաբար հատկացվել է վահանին։ Սակայն հատկապես Արցախի խաչքարերի վրա վահանին հաճախ փոխարինում է պատկերաքանդակը, որը սակավ դեպքում է միայն սրբապատկեր։ Հայաստանի միջնադարյան այլ հնավայրերից հայտնի խաչքարերի և քանդակների հետ բաղդատելիս նկատվում է, որ Արցախի խաչքարերի վրա շատ են կենցաղային բովանդակություն ունեցող քանդակները, աշխարհիկ անձանց՝ հանդուցյալի, ռազմիկների, նվագածու-դուսանի և այլ պատկերները։ Գանձասարի այս խաչքարն ըստ բառատող արձանագրության դրվել է ոչ թե որպես տապանաքար, այլ «ի տապանի», այսինքն՝ տապանաքարին կից, որպես հանդուցյալի հիշատակին կանգնեցված կոթող։ Խաչքարի վիմագիր հիշատակարանը հաղորդում է հետևյալը.

ԹԻ
ԻՆ
ՈՂԼԻ
ԵՍՀԱՍ ԱՆՈՐԴԻՎԱԽՏԱ
ՆԳԱԿԱՆԳՆԵՑԻ ՁԽԱՁԻՏԱՊԱՆ
ԻԴՍՏԵՐԻՄՈԽԱԹՈՒՆԻՆԵԻՄԱԻՐԻ
ԻՐԹԱԳՈՒՀՈԴՍՏԵՐԹԱԳՈ[Ր]ԻՆԲԱՂԱՑ

որ կարդացվում է՝ ԹԻԻՆ։ ՈՂ։ (1181 թ.) ԷՐ։ ԵՄ ՀԱՍԱՆ ՈՐԴԻ ՎԱԽՏԱՆԳԱ ԿԱՆԳՆԵՑԻ ՁԽԱՁՍ Ի ՏԱՊԱՆԻ ԴՍՏԵՐ ԻՄՈ ԽԱԹՈՒՆԻՆ ԵԻ ՄԱԻՐ ԻՐ ԹԱԳՈՒՀՈ ԴՍՏԵՐ ԹԱԳ(Ա)ՎՈՐԻՆ ԲԱՂԱՑ։

Դատելով արձանագրության իսկ վկայություններից, կարելի է ենթադրել, որ մոր և երեխայի քանդակը մոր՝ Թագուհու և դստեր՝ Խաթունի պատկերաքանդակներն են (նկ. 3)։

Առինջի Ոկ։ (1181 թ.) թվականի խաչքարի պահպանված մասի վրա պատկերներ չկան, բայց այն հետաքրքիր է իր բանդակներով, մանավանդ արձանագրությամբ։ «Հանգիստ»-ը հիշատակված է ոչ ավանդական եղանակով. այն փորագրված է ոչ թե գերեզմանական տապանաքարի, այլ հենց խաչքարի վրա։



Նկ. 3

Զարդամոտիվների հաշակավոր ընտրությամբ, կատարողական վարպետությամբ ևս աչքի ընկնող Առինջի կոթողը ուսումնասիրողներին հնարավորություն է ընձեռում զարդաքանդակների ոճը, քանդակի հորինվածքը նկատի առնելով որոշել ոչ միայն Առինջի գերեզմանատանը, այլև շրջակա և մյուս հնավայրերում գտնվող անթվակիր ու անսստորագիր, բայց նմանօրինակ կոթողների ժամանակը, դուցե և քանդակագործ Սարկավագին պատկանելու խնդիրը։

ЗАМЕТКИ О ДВУХ МЕМОРИАЛЬНЫХ ПАМЯТНИКАХ XII В.

Г. О. КАРАХАНЯН

(Резюме)

Среди многочисленных хачкаров, воздвигнутых по разному поводу и имеющих различное назначение, редко встречаются такие, на которых есть номинальная надпись, характерная не для хачкаров, а для надгробных плит. К такого рода редким образцам относится хачкар из Ариндж, на котором высечена надпись, гласящая, что хачкар воздвигнут в 1181 г. и его заятелем был Саркаваг. Идентичным мемориальным памятником является хачкар в Гандзасаре, датируемый тем же 1181 годом.